

## U P D A T E

ԿՐՈՆԱԿԵՄ, ԲԵՐՅԵԿԵՄ, ՊԵՏՄԱԿԵՄ, ԲԵՆԱՇԻՐԱԿԵՄ և ԱԶԳԱՅԻՆ  
**ԱՄՍԱԳԻՐ**

ՊՐՈՎԻՆԿԻԱՆ ՀԵՂԻ ՏՐԱՎԵՐՏԻՆ ՊՐԵՄԻԱ 04 ԽՈՍԽ 1894 թ.

ԿՐօՆԱԿԱՆ

## ՊՐԵՄԻ ԱՌԱՋՈՒՅԹԻ ԴՐԱ


四

ՀԱՅՈՒԹԻՒՆՆ  
Ը Ս Տ

(Ըարութակա թիւն) \*

Թիւններ ունինք միմիայն Հռովմական պե-

տութեան օրէնսդրութիւնից։ Հին հռովմէ-  
ական օրէնքը հաշուումէ այսպէս.



Եթէ դ և գ պսակուեին, այդ համարուեր  
երկրորդ աստիճան կամ ծնունդ. ե և դ՝ եր-  
րորդ աստիճան. ե. և զ. չորրորդ աստիճան.  
է. և ը. վեցերորդ. ե. և զ. կարող եին պսակ-  
ուել բայց չեին կարող ամուսնանալ դ և տ  
(խորթ որդի) ե ոչ դ ու լ:

Անշու շտ պետութեան մէջ եկեղեցին ևս  
կլարմարտէր այդ օրէնքներին։ Բայց ահա

չորրորդ գարում թնկողոս Մեծն արգելեց ե. և զ.ի այսինքն թռունակիցների ամուսնութիւնը, միջդեռ նորա յաջորդ Արկատիոսը վերացրեց այդ արգելքը:

Ապային Զ. գարում բիւզանդեան եկեղեցին արգելեց նախ ե. և զ.ի այն է՝ թռունակիցների ամուսնութիւնն և յետոյ նոյն դարում նաև է. և ը. այսինքն ծոռներինը: Ուրեմն վեցերորդ աստիճանի պատկն արգելուած էր և միայն թ. և ժ. կարեին ամուսնանալ:

Արգելքների այդ յաջորդական ընթացքը ցոյց է տալիս, որ Բիւզանդեան եկեղեցին մաքառում էր հին հռովմէական սովորութեանց գէմ: Բոլոր հետազօտութիւնից երեսում է, որ չհասութեան արգելքը դնում էին այն աստիճաններում: ինչ աստիճաններում ցեղակիցները աղկանաներ էին համարուում: Ուրիշ կերպ ասած: այն անձինք, որոնք աղգականներ էին համարուում ժողովրդի մէջ, չին կարող պըսակուիլ:

Յայտ է որ Բիւզանդեան եկեղեցում չհասութեան կանոնն օրըստօրէ է զարգացել մինչդեռ Հայոց Եկեղեցում մի և նոյն կանոնն է կրկնուում: Ցեսնենք արգեօք մեր մատենագիրները միջոց չեն տալիս որոշելու Հայոց կանոնի որպիսութիւնը:

Մովսէս Կաղանկատուացին պատմում է, որ Ը. գարի կիսում «ինի առնակնութիւն իշխանացն Աղուանից: Վարազոյ՝ Վախտանգայ որդի, թռուն Վարազմանայ, զթռունակիցն իւր Վարդանուհին արար իւր կին. և Ցէր Միքայէլ տարազերալ զնա թէ մի' յանդզնիր առնել զի թռունք էք»:

Խշանը չէ լսում և յենուելով Վրաց Կաթուղիկոսի ապօրինի թռյատուութեան վրայ պատկուում է: Միքայէլ Կաթուղիկոսը ժողով գումարեց Մաքենոցաց վանքի առաջնորդ Սողոմոնի (յետոյ Հայոց Կաթուղիկոս) հետ և նզովեցին Վարազոյի առնը: Պատմին ասում է որ անմիջապէս «հասանեին Ցամիկը, և ի զոդ մօրն փողառեցին արովի և զմիւս որդին ձի տարեալ սպան»:

Թռուների ամուսնութիւնն այնքան ծանր յանցանք էր, որ ըստ երկույթին նման պատճառներից ստիպուեց Արմեն Կաթուղիկոսը ժողովով նորոգել վերոյիշեալ կանոնը: Առհասարակ Աղուանից երկրում աղգաշաղախ ամուսնութիւնք յաձախ էին պատահում: որպէս տեսնում էնք ի. գարի վերջերում պատահած անցքերից: Այն պատմին ասում է, (Ա, Ա<sup>2</sup>):

«Ընդ այսոսիկ ապա ժամանակս տարօրէն խառնակութեամբ զինաւորք աղգաշաղախ Աղուանից աղծպիղծ եղեալ, նախ՝ թագաւորապն տէրն կողթայ տունն, ապա յԱրշակաշէն դաւառի երեք տուն դաստակերտացն՝ Շնզմայն Մամշեզուն և կուր գետոյն յայնկոյն՝ տունն Հեղերոյ, և յիւտի գաւառն ի Գիս՝ Վարազ—Փերսի տունն որ զաքնար ուներ պատիւ, և Վարաժանու սպասաւունն, որ յԱրաժականն նսէր, և Ցուերակու տունն: Զսցա ամուսնութիւնն երանելի հայրապետն Ուխտանէս անիծիւք փակեաց. և անդարձ լեալ ի գտեալ չարեացն՝ ամենեքին առ հասարակ բնացին նզովեցին առ հասարակ բնացին նզովեցին առ հասարակ բնացին յերկրէ»:

Այս տեղից երեսում է արդէն, որ Հայոց եկեղեցին մեծապէս մաքառում էր աղգախառնութեանց գէմ: Թռունակիցների ամուսնութիւնը մինչեւ անդամ իշխանների մէջ արգելուում էր և հակառակ գէպքում նզովում: արդ ուրեմն որ աստիճանն էր թօյլատրուում:

Թռունակիցների պսակն ըստ Հռովմէական օրինաց չորրորդ աստիճանումն է. վերև տեսնք, որ հակառակ դրբան Ներսէս Բ-ի կանոնն ասում է թէ «զըորրորդն ապաշխարեսցէ», այլ և եթէ մեր նախնիք ըստ Հռովմէական թռյատութեան կանոնադրած լինէին, Աղուանից Վարազոյ իշխանին չին նզովել, կամ միայն ապաշխարանք կնշանակէին ըստ Ներսէս Բ-ի: Պարզէ ուրեմն որ Հռովմէական հաշիւը մեզ պէտք չի գալ: Պէտք է ուրիշ հաշիւ որոնենք:

Զ. գարից ունինք Արահամ կաթուղիկո-

սի մի թուղթն, որ թէե փոքր ինչ մուլթ է, սակայն բաւական պարզում է մեր հարցը: Այն տեղ կարդում ենք Մովսիսական օրէնքի բացարութեան մէջ, «Հրաժարեցոց յառաջին ազգէն և ապա յերկրորդէն, և հասեալ յայն՝ զոր մեք խորթս կոչեմք՝ և ասէ՝ մի՛ յայտներ զի համհօրեայ քոյր քո է: Եւ ապա յետ ոչ սակաւ բանից ևս զարմանալոյ արժանի իմն նշանակէ: Քանզի իրր ասաց թէ համհօրեայ քոյր քո է: Պարձեալ երկրորդէ այսպէս թէ՝ զառականս կնոջ և զդստեր նորա: — որ լինի մին կին և միւսն խորթ, — մի՛ յայտնեսցես և զդուստը ուստեր նորա: — այսիքն է զխորթին, — և կամ զդուստը դստեր նորա մի՛ առնուցուս, քանզի ամբարշտութիւն է: Ապա վերագոյն քսն զայս նշանակէ: ոք նոյն հետ երրորդ աղջ հութիւն ըստ յառաջ յայտնագոյն է առնելոյ մեր, զառականս դստեր ուստեր քոյ կամ դստեր դստեր քոյ մի՛ յայտնեսցես:

Բայց մի՛ ոք կարծեսցէ զասացեալս ի վերայ ծնողին միայն, այլ և ուրիշ է հանձնեն: Քանզի այս կատարեալ յիմարութիւն է: Քանզի ոչ ուրուք եղբայր առանց հօր և կամ քոյլու այլ թէե հօրաքեռ որդի և կամ մօրաքեռ, ունող և աղջականուն և և նոյն և և որոշուց: Զի ուրիշ առաջնուն և երիշ և երիշ աղջ առնեն, այսուհետ և ելքօրութոյն և կամ այլոց առ մինուսն առ աղջն աղջն և երիշըն և երիշն և առուրդ աղջ առ աղջն:

Այս տեղից արդէն տեսնում ենք որ Աբրահամ կաթուղիկոսը 608-թուին և յետոյ հրամայումէ թէ իւր բոլոր եպիսկոպոսներին և թէ Աղուանից (Դ) կաթուղիկոսին՝ պինդ պահել առաքելական կանոնադրութիւն, որ հաստատուած է վերստին Ա. Վարդապետների վը:

\* Առ Միհմ, Գոշի. Դատաստ. Ա. Էջմիածին. 1880. էջ. 219. Գոշն ունի և իւր բացայացութիւնը, սակայն միայն ըստ Մովսիսական օրինաց անձնական հետեւաբանութիւն է: որպէս ինքն է ասում (տես. էջ. 225—229), Ամբողջ գրուածքն առ հասարակ մասնաւոր՝ կամ նոր ոճով ասած՝ գիտնական և ոչ եկեղեցական օւսումնասիրութիւն է: ուստի և քիչ կազ ունի հայոց Նկեղեցու սկզբանց հետ,

առփ ըստ որում և բացատրումէ որ չորրորդ ազգը պէտք է երկու կողմից զոյդ զոյդ հաշուուել որ կլինի 8 աստիճան: Մինչև անգամ Մովսիսական օրէնքի վրայ իրաւունք ունի յենուելու, վասն զի այն տեղ ասուած է:

«Զառականս կնոջ եղբօր քոյ մի յայտնեսցես զի առականք եղբօր քում են: Զառականս կնոջ և զդստեր իւրոյ մի՛ յայտնեսցես գդուստը ուստեր և զդուստը դստեր նորա մի՛ առնուցուս՝ յայտնել զառականս նոցա, զի ընտանիք քո են, ամբարշտութիւն է»: Իսկ այս կլինի՝

ա	բ	գ
եղբայր 0	եղբայր 0	0 կին
գ	ե	ե
ուստը 0	ուստը 0	ուստը
գ	ե	ե
դստը 0	դստը 0	դստը

Եթէ առ առնէ զին, այդ արդէն աստիճաններով հաշուած՝ կդառնայ չորս, առաւել ևս հեռու, եթէ է. ին առնէ: Ուրեմն Աբրահամ կաթուղիկոսը չեր կարող «ազգ» «զարմ» «ծնունդ» բառերը միական աստիճաններ հասկանալ, ապա թէ ոչ Յահապիվանի ժողովն ևս չեր կարող արգելել թէ «զիերմ» հարազատի և զազգականի զին ոք մի՛ իշխեսցէ ունել ի կնութեան .....: Այլ և Կերսէս Մեծը չեր արգելել նուին առնել որ հօրեղբօր որդու կինն էլ է, \* այսինքն չորրորդ աստիճանում: Ասկայն ինչպէս էլ լինի՝ կաթուղիկոսի խօսքերը ցոյց են տալիս, որ նա երկերկու է հաշուում, այսինքն մէկ կողմից չորս և միւս կողմից չորս:

Ահա այսպէս հասկանալի է դառնում և Կերսէս Բ-ի խօսքերը թէ «երբորդքն մեկնես-

#### 1. Դատ ԺԸ. 16.

Միիթար Գոշն ևս երկու կողմերից և հաշուում չորս թէեւ Մովսիսական օրէնքին հետեւելով՝ պահանջնումէ և ներում չորս և երեք, երեք և երեք ևս:

\* Փաւատոս. IV, ԺԵ.

ցինչ այսինքն՝ երրորդ բառը յօդնակի դարձնելով՝ լինումէ երկու կողմից երկու «երրորդ» ազգերի ամուսնութիւնը: Իսկ եթէ հռովմէական աստիճաններով լինէր, երրորդ աստիճանում կիմնէր, եթէ եղբայրն ուզէր եղբօր աղջիկը՝ բայց այդ ոչ միայն աներևակայելի է, որ պատահէր Հայոց Եկեղեցում այլ և չէր լինիլ «երրորդքն»:

Ըստ այսմ ազգականութիւնը վերջանում է առներով և յետոյ ուրեմն կարեն պատուիլ կառները: Բայց որովհետեւ Եկեղեցին ունի նաև մեղմացուցիչ աստիճան՝ կանոնից սակաւ հեռացողների համար: Ուստի առները չ կզըսակուին միմիայն պապշարանօք:

Այդ ասում է և Արքահամ կամտողիկոսը թէ՝ «բայց եթէ արեան յարիւն ոչ տաս խառնել որ հնալու անուն Թշնաւուրունիւնն ողարտի արդարութեամբ իտապարտաւ ուրիշութեաւ դժունական»:

Ուրեմն որքան հեռու լինի ամուսնութիւնն ազգախառնութեան հետքերից. այնքան աւելի արդար կիմնի պակը: Ասկայն անհնարին է այդպէս միանգամից վերացնել ժողովրդի վատ կրքերն և ճշմարտութիւնը յանկարծակի արմատացնել: Ուստի և ասում է:

\*Իսկ յանդգնելոցն և պատերազմակրաց ընդ Հոգւոյն Արքոյ՝ բան է անոնին զարդ երանելի շարք է Քրիստոս հոգուածեաւ և և հնալու շայդմ իբրև պարէժան անձնանելի պահի, նոցա զայս աւանդեսցես—սկիզբն ի հինգերորդէն յառաջ\*:

4. Մինչև այժմ էլ Արքաբաղում ասում են՝ «կոռներն իրար առնում են»:

Ներսէս Բ.-ի Զ. կանոնը թէ՝ «վասն երկրորդաց որ՝ եթէ թողցեն Փե. ամ արտաքոյ և Ե. ընդ օրինօք Եկեղեցւոյ», նոյնն է ապացուցում: որ չի կարող եղբօր և քրոջ ամուսնութիւնը լինել.

5. Առն բառը ցոյց է տալիս: որ դոքա ևս կարող են եղել դիւրաւ իրար առնելու:

\* Տես. և Բարսղի Մժե. կանոնը. Եթէ ոք յիւր արենէ և ի մերձաւորէ խնա Խութիւն առնէ մինչև ի չորրորդ և ի հինգերորդ ազգն, պատկն անգաւոր լիցի և պակագիրն լուծցի ..... Եւ ՀՅ. Եթէ ոք առնու կին ի մերձաւոր արենէ իւրմէ մինչև ի վեցերորդն և եօթներորդն, նզովեալ եղիցի,

Ուրեմն ազգականութեան մերձեցողների համար սահման է գնում, որ հինգերորդ ազգից դեպի առաջ և ոչ թէ դեպի յետ՝ ամուսնութիւն թոյլատրեն, քանզի որ յունասունն ընու նիւն ուրիշ է առանան: Այնց ողորմութիւնն արարեալ զահմանն մեղմացուցին, բայց լաւցն բնիկն է, որում տեղեակ է և քո սրբութիւնդ»:

Արդ քանի որ Եկեղեցին մանաւանդ Հայաստանեայց Եկեղեցին, բայց նիւն չէ ուղում սրբութիւն հաստատել ժողովրդի մէջ, այլ համոզելով, դաստիարակելով և կրթելով, ուստի միջոց է տալիս իւր սուրբ կանոնին հակառակողին, որ հետզետէ զջայ և քաւէ իւր կանոնազանցութիւնը: Վասնորոյ և առների ամուսնութիւնը չէ արգելում: Իր ուրիշ ելք չկայ, բայց ապաշխարանք է նշանակում: որ դրում է ըստ կարողութեան և հանգամանաց (նուիրատուութեամբ) յօդուտ Եկեղեցու, զպրոցաց և այլ հաստատութեանց, ողորմութեամբ յօդուտ աղքատաց, Եկեղեցի յաճախելով և աղօթելով և այն): Այս այս է արտայայտում Ակրսէս Բ.-ի կանոնը թէ՝ «զորորդն ապաշխարեացէ»: Այս թոյլատութիւն է ընդ ուղարկուածունութիւն, վասն զի Հայոց Եկեղեցին կտրական կանոն չէ գնում կենսական հանգամանքների մէջ ժողովրդի բուռն և հրապուրական կրքերի դէմ: Այս ապաշխարանքը զգուշութեան միջոց է, որպէս զի առաքելական և Շահապիփանի կանոնը շխախտուի և երրորդաց մէջ հեշտութեամբ ամուսնութիւն չպատահական»:

Եկեղեցին դատապարտում է մեղսագործութիւնը, սակայն ոչ թէ բացէ ի բաց արգելում է մեղք գործել, քանի որ այդ անկարելի է կատարելապէս սխալական մարդու համար, այլ զջայալու և ապաշխարելու միջոց է տալիս, որպէս զի կարենայ հետզետէ դատարակել նոցա: Այսիմիայն հիմնական սկզբանց

և մեկնեսցեն ի միմեանց առաջորդքն, և վասն պըսակին անորդելոյ և. դրամ տուգանս տացէ յեկեղեցին ..... Ինչպէս երեսում է նոյն կանոնների են եղել նաև Կապագովկիոյ և Ասորոց Եկեղեցիներում:

գեմ մեղանչող լրբերին է, որ բանադրումէ և դուրս ձգում եկեղեցուց, մինչև որ արտասունքով յետ դան իւրեանց ընթացքից:

Մյոյն է և ամուսնութեան մէջ, մեղք գործող կանոնազանցը պէտք է ապաշխարի, երբ որ նա անկարող է չգործել այդ: Եկեղեցին էլ աղօթումէ նորա համար, որ զօրանայ և ճշշմարտութիւնը ճանաչէ: Ասկայն թռունակցութեան սրբութիւնը պղծողին ուղղակի նզումումէ:

Հայաստանեայց Եկեղեցու չհասութեան կանոնը կրկնումէ և միջին զարերում ըստ որում Վերսէս Շնորհալին գրումէ. «Մի ոք համազգեաց՝ որոց արեան մերձաւորութիւն իցէ, պսակ օրհնութեան դիցէ, այլ մինչև ի յերկուց կողմանցն զըսրորդ աղջին զիսաւորութիւն կատարեալ ունիցին»: <sup>1</sup>

Ա. Շնորհալին վերստին հրամայումէ այն, ինչ որ նախնիք հրամայել էին: Այդ կանոնն էական է չար կրքերի դէմ ուստի և ամենից շատ կրկնութեան կարօտ է:

Բայց աշա չովմէական եկեղեցին Է. դարեց սկսեալ չափազանց խստացրեց իւր արգելքն: Հին զերմանները պահանջումէին որ երկու կողմից երեք երեք ծնունդ չեռու լինին պսակուղները, իսկ Հռովմէական եկեղեցին թողեց հին Հռովմէական հաշիւն ըստ աստիճանաց, սկսաւ թուել զոյտ զոյտ և արգելեց մինչև եօթներորդ աղջը <sup>2</sup> այսինքն 14. դաստիճանը: Այս արդէն չլսուած արգելք էր, որ կար Ա. Շնորհալու ժամանակ և պահուեց մինչև Ժ. դարի սկիզբը: Միայն 1215 թուին իննուինստիոս Գ. վերացրեց հինգերորդ, վեցերորդ և եօթներորդ աղջի ամուսնութեան արգելքը, թողներով միայն չորրորդ աղջի այսինքն 8-դ աստիճանի սահմանը: Սա այդ արաւ Լատերանի 4-դ ժողովով, (կանոն Ճ.)—այն ևս գործնական դժուարութեանց պատճառով: Այդ ժողովը թոյլատրումէ նոյնպէս

ամուսնութիւնը կոռների, կամ մի կոռնի և մի խորթ թէ հարազատ ծոռնի մէջ: Այս կանոնով է վարուում Հռովմէական եկեղեցին մինչև այժմ:

Արդ՝ տեսնում ենք որ Ա. Ն. Շնորհալին ամենեին չէ հետեւում այդ արևմտեան խստութեանց և պահպանումէ իւր եկեղեցու մեղմ կանոնը Հարկաւ, որքան պահպանուի աղջակցական սէրն առաւել հեռաւոր ցեղակիցների մէջ, այնքան լաւ է և համաձայն է քրիստոնէական վարդապետութեան, սակայն Հայոց Եկեղեցին չէ տարածում իւր արգելքն աւելի քան ծոռների աստիճանն, որոնք ամենուրեք մերձաւոր աղջականներ են համարուում:

Ժ. դարում պատերազմական խառնակութեանց հետեւեց մի անկեալ վիճակ, այնպէս որ հարդ ամուսնութեան սուրբ օրինացն բարձաւ, և հեթանոսուրէն արիւն ընդ արեան խառնակութիւնը, ժողով գումարեց Սում 1243 թուին և քննելով հանդամանքները, հրամայեց առանձին կոնդակով:

«Զպսակն ընտրութեամբ արասցեն, վեց ծննդովք հեռացեալք յաղջակցութենէ արեան»: <sup>3</sup>

Առաջին անդամ աչքի է զարնում ընթերցողին, որ իրը թէ կոստանդին Ա. արգելքները խստացնումէ, սակայն իրօք այդպէս չէ: Սա նոր կանոն չէ ուղում դնել և իւր կանոնների համար շեշտումէ՝ ևսահման չափաւոր և դիւրագործ՝ քաղեալ ի կանոնաց և ի հրամանաց Հարցն սրբոց, ի պէտս եկեղեցականաց և աշխահականաց: <sup>3</sup> Ուրեմն կոստանդին հրամայումէ վերատին նոյնն, ինչ որ կանոնադրել են իւր նախորդները: Յայտ է որ այդ վեց ծննդովք հեռացեալքը խօսքերն արտայալտում են նոյնն, ըստ որում մէկ ծընունդ են ծնողը, միւս ծնունդ են պսակուողներն և մէջ տեղը մնում է չորս ծնունդ՝

1. Ընդհ. էջ. 84.

2. Այդ եղաւ Թ. դարում և իւր վերջնական ձեռք կանոնադրուեց Կիկողայոս Բ.-ի օրով 1058 թուին:

3. Կիրակոս. ԼԹ. 2. Անդ. Խն. 5. Անդ. Խ.

այսինքն՝ որդիք, թռոներ, ծոռներ և առներ:

Այսպէս է ասում և այդ կանոնները բերող Վարդան մեծը. «Գի չորս ծնունդ ի մէջն է ըստ չորից տարերց կատարման: Եւ առաջին ծնողն ուստի յառաջ եկին չորս ծնունդքն. և հինգերորդն՝ որ լինի խնամութիւն. մինի այս վեց ազգ»:

Ահա այսպէս պահպանուումէր ազգականների չհասութեան կանոնը անցեալ դարերում Այդ վերջին հրամանից յետոյ զանազան վարդապետներ չեն ելնում նախագծուած սահմանից:

Ժիր դարի սկզբում Եսայի Նշեցին դնում է առ Տէր Մատթէոս եպիսկոպոսն Արագատականի գրուած թղթում Ս. Սերոսէս Շնորհալու խօսքերը բառ առ բառ ընդօրինակելով:<sup>1</sup> Ամին նման կրկնող է հանդիսանում նոյն ժամանակ ապրող Յովհան Երզնկացին (<sup>†</sup> 1326):<sup>2</sup> Այդ է պնդում ու այդ կանոնին է յարում և Յակովը Ղրիմեցին Ժիր դարի վերջերում:

Այս կանոնն է ճանաչում և Ս. Գրիգոր Տաթևացին,<sup>3</sup> ասելով՝ «Իսկ օրինացն ազգն որ են խնամիքն, և բանականն որ են մարմնականքն, ոչ լինին խնամիք մինչ ի Դ. ծնունդն»: Ըստ որում և յարումէ գորան Ս. Ս. Շնորհալու պատճառաբանութիւնը:

Ս. Գ. Տաթևացին յիշումէ և եօթն պորտի տեսութիւնն, որից երեսումէ որ այդ ժողովրդական կանոնը շատ հին է և այդ է եղել առաջնորդող սկզբունք: Եօթն պորաը նոյն է թէ եօթն աստիճանն, որից յետոյ ամուսնութիւնը թոյլատրուումէ: Հայ ժողովրդի կանոնական այս գեղեցիկ բանաձեւը պէտք է պահել իրեւ ազգային արտայայտութիւն, քանի որ աստիճանը բառը նոր է:

Գ. Արդ՝ չհասութեան կանոնն արգելումէ որդուոց, թռուանց և ծոռների կամ թռոնիաների պսակն: Իսկ ծոռների որդիք, այսինքն առները միայն մեղմացրած արգելք ունին.

1. Ճռաբաղ. 1861. Էջ. 207.

2. Սինոգի կանոնագիրը, կանոն ՌՃԼԵ.

3. Հարցմանց գիրք. Էջ. 612.

լաւ է եթէ դոքա ևս ազգականութեան մէրը պինդ պահէին, բայց եթէ անկարող դանուին զսպելու իւրեանց կրքերն, այն ժամանակ կամուսնանան, միայն թէ լաւ զիտենալով՝ որ այդ աստուածահամոյ չէ և ուրեմն պէտք է ուրիշ բարեպաշտական զոհաբերութեամբ, ազօթքով և բարեգործութեամբ քաւեն իւրեանց յանցանքը՝ սիրազրուժ կեանքով տարաստիկ մինելու համար:

Ըստ այսմ:

### Ժնողք

0 0

ա 0 եղբարք 0 բ

գ 0 թռուաներ 0 դ

ե 0 ծոռներ 0 զ

է 0 առներ 0 ը

թ 0 կոռներ 0 ժ (կամ ձագ թռոնիք):

Թ. և Ժ. կարող են ամենայն տեղ թոյլատրուիլ: Թէ և այստեղ ևս քահանան պարտաւոր է յիշեցնել քարոզով որ առաւել աստուածահամոյ կիներ, թէ տարրեր ընտանիքներից կիներն ամուսինները: Լ. և Ը. կարող են միայն անելանելի հանգամանքներում ամուսնանալ բայց ընդ ապաշխարանօք, նոյն կանոնին կենթարկուին նաև Լ. և Զ. նոյնպէս և Ե. և Ը. ամուսնութիւնք, այսինքն մէկ գծի առնը միւս գծի ծոռնի հետ, թէ և այս առաւել ծանր է:

Վերընթաց և Վայրընթաց գծերում ի հարկէ՝ ոչ մի կերպ թոյլատրելի չէ: Թռոնակիցների ամուսնութիւնը նզորումէ և չի կարող վայելել չի բողոքիլ ինչպէս մեր Ս. Հայ-

րերն ասում են: Այդպիսի պատճերն անվաւեր են և պատկաղիրն պէտք է կարգալում լինի: Կոյն կանոնին է ենթարկուում նաև ծոռների ամուսնութիւնը:

Խորթութեանց մէջ էլ մեր նախնիք ոչ մի տարբերութիւն չեն զրել այնպէս որ ոչ մի սկզբունք չկայ կանոնը մեղմացնելու խորթութեանց հանդամանքներում: Կոյն աստիճանները մնում են նաև խնամութեանց նկատմամբ: Եւ որպէս ի մէջ արենազգացն ոչ լինի խնամութիւն մինչև ի չորրորդ ծնունդն՝ Կոյնապէս և ի մէջ խնամոցն ոչ լինի այլ խնամութիւն մինչ ի գու ազգնա: Վերջապէս «մինչի գու ծընունդն է» արգելքը հոգեոր ազգականութեան (աւազանին ծննդեամբ) համար, մինչդեռ որդեգրական հոգեոր ազգականութեան մէջ «ոչ լինին խնամիք մինչև ի կրկին ծնունդն», <sup>2</sup> այսինքն միայն երրորդ ծնունդն է թոյլատրելի, իսկ երկրորդն ապաշխարելի:

Այս կանոններն արդէն վերջնականապէս ուրշում են չհասութեան աստիճանները: Միայն թէ մեղմացուցիւ ապաշխարանքը խնամութեան մէջ գուցէ աւելի կարելի լինի թեթեացնել քան թէ բուն ազգականութեան մէջ: Եւ եթէ լաւաւորշեան աթոռի առաքելական գահակալը կամենայ հրամայել՝ որ հոգեոր վարչութիւնը թոյլատրեն առների ամուսնութիւնն ընդ ապաշխարանօք՝<sup>3</sup> ըստ Հայութանաւայց եկեղեցու կանոնական իրաւանց, այն ժամանակ գորանից պակաս աստիճաններում անխուսափելի ամուսնութիւնը կախուած կմնան միմիայն Հայրապետական բարեհացողութիւնից:

Իսկ այդպիսի անխուսափելի դէպքեր կլինին միշտ, որոնցից իւրաքանչիւրն ևս կունենայ իւր մասնաւոր և չնախատեսուած պարագայք՝ կարօտ բարձրագոյն իշխանութեան նորանոր կըշուադատութեանց, թէ արգեօք չէ տուժում Եկեղեցու կանոնական սկզբունքը: Հայրապե-

1. Ա. Տաթեացի, անդ. էջ. 611. 2. Անդ.

3. Ա. Դ. Թոյլատրելլ կախուած է իւրաքանչիւր Հայրապետի այն վատահութիւնից, որ նա տածումէ դէպի հոգեոր վարչութիւնը կամ Ա. Սինոդը:

տական բացառիկ թոյլատուութիւնք կունենան և իւրեանց կարեւոր բացատրութիւնք, որոնք օգտակար և կրթիւ կլինին թէ ամուսնացողների և թէ, առ հասարակ ժողովրդի համար: Հարկաւ այդ թոյլատուութիւնք կիրականանան ամուսնացողների երկիւղած նուիրաբերութեամբ յօգուտ եկեղեցու և աղքատաց ըստ Հայրապետական համաձայնութեան, որոնք միշտ կապուած կլինին եկեղեցի յաճախելու և աղօթելու պարմանի հետ: Մինչդեռ ուղղակի ըմբոստ կանոնազանցները <sup>\*</sup> կպատժուին ըստ կանոնագրական պատժական սկզբանց:

Հայրապետական թոյլատուութեան իրրե հակիմք և գեղեցիկ օրինակ աւելորդ չի լինիլ երկարել Եփրեմ կաթուղիկոսի կանդակը: Ահաւասիկ:

«Ծառուղթ առ Թէտն Տփիսիսու Վերսէս Արբազան Արքեպիսկոպոսն:

Յիսուսի Քրիստոսի ծառայ ևն:

Ակութեամբ շնորհաց ամենասուրբ Հոգւոյն և Քահանայապետական սիրոյ և աղօթից ձօնմամբ՝ առաքեմք զողջոյն Փրկչական ի զօրանալ քեզ, սիրելոյ և հարազատի որդւոյ Մեծի Գահոյ Ա. Խմիածնի՝ Սերսէս զիտնազարդ Արքեպիսկոպոսիդ, կայսերախնամ քաղաքիդ Տփիսիսու, և մնալ յաւերժ ի կեանս խաղաղուստ՝ ի մեր սրտի բախանս բազում ամէն:

Յերեսնեակին պատճերին տարւոյ՝ Դրոշմեալն ի քէն դիտաւորութիւն բանից ի քարտի անդ վերածանեալ ի մէնջ եղեւ ի նորում ամսի տարւոյս, որով և ծանուցաւ իսկ ժայռամատոյց խնդիր ձեր յաղագս յարգելի կնեազ Մանուչարի Պումանով դստեր, զոր խօսեցեալ են ընդ ազնիւ Հեղիմ աղայի որդւոյ պարոն Զաքարիայի:

Արդ ուրացի ապաքէն աստանոր լացողն զբազմաց, թէ վեհ է ինձ խնդրոց յաջմէ և յահիկէ՝ քանզի այն ինչ բանք են կնքողաբար ի կանոնս հարցն սրբոց ի սակս այօքանեաց

\* Ըստ անգամ դիմագրութիւն կը տեսնուի նաև ամրգիկներէն, որոնց բուն պաշտօնն էր կրօնական—բարոյական զարգացման սպասաւորելու Սիօն. 1875. էջ. 157. (Նամակ Մ. Վ. Մուրատեանի):

հաշուց ճռւղից, յայտնի իմն է յօդունց առաւել սիրելոյդ և որ ինչ առաջիկայ անձն կութիւն են, տեարց դստերաց, բացափայլ եւ է. ըստ որում աշխարհ թակարթալար պատահմամբ, ուստի խոչեմաքար տեսանի յիմաստափակութիւն Մեծանգրեայ, յասեն թէ՝ ողուստր հարմացու թէ և ինչ ոչ խօսեսցի զանձնէ, լռութիւն նորա բազմախողս է: Ու բաւիցեն հարիւր աչք Արդոսի զգուշանալ ի պահպանութիւն Յովայ իրրե զերինջ կայտառելոյ ի պատրանաց Ներսէսի:

Արդ՝ որովհետեւ կոյն եղեալ ընդ չափ ըստ առաքելոցն՝ և վտանդ ևս ի վերայ կայ, և հաստատեալ է ծնողն ի սրտի իւրում: վասն ամենայնի պատճառաց, և մեք հայելով ի հանգամանս ամենայն, ի վիճակն ի ժամանակն ի յարմարութիւն և ի յօժարութիւն կամաց առնելեաց և ի խնդիր ձեր սիրելութեան և ազնիւ կնեացին, ներելով յարիմք առ հրամանն լինել լրում կամաց ձերոց և որոց են առ այն իդէ խորհրդոց, ընտանեացն ասեմ նշանաւորաց:

Այլ մի լիցի զանց առնել ըստ կանոնաց զնոքոք Մօրն Եկեղեցեաց նայեցեալ լինելոյն իրականութեանց և զօրութեան առաջադրաց այնմ: մանաւանդ չափմամբ չափելով զիւրեանց մեծանունութիւն և պատիւ՝ ծանիցեն են:

Ողջ լեր իմն չնորհօք, որ և մնամք աղօթանուեր վասն ամենեցուն և բարօրութեան ձեր ցանկացող

Կաթուղիկոս ամենայն Հայոց  
Վշտալի Եփրեմ:

Այս արդէն շատերից մի օրինակ է թէ ինչպէս էին վարուում Հայոց Կաթուղիկոսք, երբ հանգամանքների այնպիսի վիճակում էին գտնուում ամուսնացողներն, որ անհրաժեշտ էր լինում ներողամտաբար ուղղելու հնարների զիմել. Վերջին կաթուղիկոսները նման դէպքելում գործ էին ածում «ոչ յօրինակ այլոց խօսքերը» սակայն բազմալի է, որ միշտ իշուին թէ այդպէս ներողամիտ լինելու պատճառներն ենթէ կանոնազանցութեան թեթեացուցիչ ապաշխարանքներն, որոնցով կա-

րողանում են սիրայոյդ ամուսիններն ամոքուել խոյս տալ վերջնական կորսատից, զղջալ և պատուիրանապահութեամբ բարեկեցիկ լինել Հայոց Եկեղեցու աստուածային շնորհների տակ:

«Բայց՝ այսոցիկ բարւոյ աւանդութեանց հակառակելոյ առաջնոց Հարցն սրբոց՝ ոչ այլ ինչ է պատճառ, քան թէ տղիսութիւն և լնկնորդն անձնահաճ կամապաշտութիւն՝ որք ոչ տեսին զառաջին պայծառութիւնն մինչ ողորմութեամբ Ցեառն լի էր երկիր .....» \*

(Ըարունակելի)

Ա. ՏԵՐ. ՄԻՔԵԼԵԱՆ.

## ՊԱՏՄԱԿԱՆ

ԲԱԴԻՐԵԽԱՆՄՈՒԹԻ.

ԶՐԱԾԱՏ ԵՐԿԻՐ.

(Ըարունակութիւն)



ագրեանդայ հիւսիսային լեռնաշղթայն Զրաբաշխ ասուած է ինախնեաց ամեն կողմ աւատ ջրեր արձակելուն. Հարիւրաւոր հավիտներ, լեռներ ու սարահարթեր, արեգիներ ու ծմակներ, տափարակներ և զառի. Վայրեր, մէկ խօսքով դաշտ և լեռ, մեծ և փոքր աղբիւրներով զարդարուած են. ամեն վայր տարածուած, սփռուած են յըտակ, սառն քաղցրահամ ջրեր, ի բաքանչիւր տեսաբանի մէջ քեզ կներկայանայ զլզըլ լացող աղբիւրի ակ մի, կարկաչող առուակ մի, սողացող առու մի, ոլոր մոլոր հոսող ջրուղի մի, ջրըքրացող նեղ և լոյն ձորակ մի, գետեր և գետակներ, աղի, լեզի աղրիւրներ, ջրալից և ճոշմային վայրեր, սըռողաւուն փոքրիկ և մեծ լճակներ ու լճեր, Արագիսի ջրաշատ երկիր մի աւելորդ է ա-

\* Ս. Ն. Շնորհալի. Ընդհ. էջ. 71.